

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 06

«Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ

19.01.2015թ. գիտական խորհրդի նիստի

Նախագահ՝ Վ. Գրիգորյան

Քարտուղար՝ Թ. Խաչատրյան

Գիտական խորհրդի 58 (հիսունութ) անդամից ներկա էին 47-ը (քառասունյոթ):

ՕՐԱԿԱՐԳ՝

1. ԳՊՄԻ-ի գիտական խորհրդի 2014-2015 ուստարվա II կիսամյակի աշխատանքային պլանի հաստատում:

Զեկ.՝ ռեկտոր Վ. Գրիգորյան

2. 2013-2014 ուստարվա գիտության և արտաքին կապերի գործունեության հաշվետվություն:

Զեկ.՝ Գիտության և արտաքին կապերի

գծով պրոռեկտոր Ա. Ֆարմանյան

3. Ինստիտուտի 2014թ.-ի ֆինանսական գործունեության մասին հաշվետվություն:

Զեկ.՝ ֆինանսական բաժնի

պետ Կ. Գրիգորյան

4. Ամբիոնների վարիչների ընտրություններ /ինֆորմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն, ֆրանսերեն, գերմաներեն լեզուների և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոն/:

Հաղ.՝ ռեկտոր Վ. Գրիգորյան, Գիտության և

արտաքին կապերի գծով պրոռեկտոր Ա. Ֆարմանյան

5. Կազմակերպական փաստաթղթերի հաստատում:

Հաղ.՝ Գիտության և արտաքին կապերի

գծով պրոռեկտոր Ա. Ֆարմանյան

6. Ընթացիկ հարցեր:

6.1 ֆիզիկական կուլտուրա և սպորտ ու նախնական զինվորական պատրաստություն մասնագիտությունների համար ուսումնական պլանով

նախատեսված մասնագիտական գործնական դասընթացների գնահատման մեջ փոփոխություն կատարելու մասին:

Հաղ.՝ ուսումնամեթոդական վարչության պետ Բ. Պողոսյան

6.2 Ինստիտուտում ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, բարձրագույն մաթեմատիկայի և մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Սամվել Սարգսյանի կողմից ներկայացված «Նանո- և միկրոտեխնիկայի նյութերի և կառուցվածքների մեխանիկայի պրոբլեմային լաբորատորիայի հինադրման և հետագա գործունեության համար բազային ֆինանսավորում ստանալու ծրագիր- հայտին հավանության արժանացնելու հարց:

Հաղ.՝ Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Ա. Ֆարմանյան

6.3 Հետազոտողի կրթական ծրագրով նախատեսված հետազոտական պրակտիկայի /2 կրեդիտ/՝ ինստիտուտի հետ համագործակցող կազմակերպությունների հետ ծառայությունների մատուցման պայմանագրեր կնքելու և մեկ ժամի /40 րոպե/ համար վարձատրման չափը սահմանելու մասին:

Հաղ.՝ ուսումնամեթոդական վարչության պետ Բ. Պողոսյան

Ռեկտոր Վ. Գրիգորյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ – 47 անդամ. կողմ՝ 47, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

1.ԼՍԵՑԻՆ.- ԳՊՄԻ-ի գիտական խորհրդի 2014-2015 ուստարվա II կիսամյակի աշխատանքային պլանի հաստատման մասին (**Ձեկ.**՝ ռեկտոր Վ. Գրիգորյան):

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաստատել ԳՊՄԻ-ի գիտական խորհրդի 2014-2015 ուստարվա II կիսամյակի աշխատանքային պլանը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ – 47 անդամ. կողմ՝ 47, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

2.ԼՍԵՑԻՆ.- 2013-2014 ուստարվա գիտության և արտաքին կապերի գործունեության հաշվետվությունը (**Ձեկ.**`Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Ա. Ֆարմանյան): /Հաշվետվությունը` կից/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Ռեկտոր, պրոֆեսոր Վ. Գրիգորյանը:

Վ. Գրիգորյանը կարևորեց միջբուհական, հասկապես` միջամբիոնային համագործակցության խթանմանն ուղղված ծրագրերի մշակումն ու իրականացումը և շեշտեց, որ աշխատակիցները ցուցաբերեն պատասխանատու վերաբերմունք կազմակերպության արտաքին միջավայրային կտրուկ փոփոխությունների պայմաններում:

Հաշվի առնելով գիտության և արտաքին կապերի գծով ինստիտուտի բարեփոխումները` առաջարկեց Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտորի աշխատանքը գնահատել բավարար:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Ա. Ֆարմանյանի 2013-2014 ուստարվա աշխատանքային գործունեությունը գնահատել բավարար, և որոշման նախագիծն ընդունել հիմք` արված առաջարկություններով հանդերձ:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ – 47 անդամ. կողմ` 47, դեմ` 0, ձեռնպահ` 0:

3.ԼՍԵՑԻՆ.- Ինստիտուտի 2014թ.-ի ֆինանսական գործունեության մասին հաշվետվությունը (**Ձեկ.**`ֆինանսական բաժնի պետ Կ. Գրիգորյան): /Հաշվետվությունը` կից/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Ա. Ֆարմանյանը:

Ա. Ֆարմանյանը նշեց, որ ֆինանսական բաժնի գործունեության թափանցիկության ապահովման նպատակով անհրաժեշտ է անկացնել անկախ աուդիտորական ստուգում:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Ընդունել ի գիտություն:

4.ԼՍԵՑԻՆ.- Ինստիտուտի ինֆորմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ու ֆրանսերեն, գերմաներեն լեզուների և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնների վարիչների ընտրություններ (**Հաղ.**` ռեկտոր Վ. Գրիգորյան, Ա. Ֆարմանյան):

Ամբիոնների վարիչների թափուր տեղերի թեկնածուների ցուցակը ներկայացնելուց հետո Վ. Գրիգորյանը խոսքը փոխանցեց ինստիտուտի մրցութային հանձնաժողովի նախագահ Ա. Ֆարմանյանին, ում հաղորդմամբ՝

ա/ ինֆորմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի թափուր տեղի համար դիմել է նույն ամբիոնի դասախոս, ֆ.գ.թ., դոցենտ Արտաշես Գուրգենի Մանուկյանը,

բ/ ֆրանսերեն, գերմաներեն լեզուների և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի վարիչի թափուր տեղի համար դիմել է ֆրանսերեն, գերմաներեն լեզուների և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի դասախոս, բ.գ.թ., դոցենտ Վարդուհի Միշայի Ստեփանյանը:

Ա. Ֆարմանյանը ներկայացրեց համապատասխան ձևայնացված կարգավիճակները զբաղեցնելու համար դիմած թեկնածուների ինքնակենսագրությունները, վերջին 5 տարիների ընթացքում նրանց հրատարակած գիտական աշխատանքների թիվը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Ռեկտոր Վ. Գրիգորյանը, ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ս. Ալեքսանյանը, օտար լեզուների ֆակուլտետի դեկան Թ. Մելիքյանը, բարձրագույն մաթեմատիկայի և մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Ս. Սարգսյանը:

Ինֆորմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի մասին խոսելիս ռեկտոր Վ. Գրիգորյանը, ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ս. Ալեքսանյանն ու բարձրագույն մաթեմատիկայի և մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Ս. Սարգսյանը կարևորեցին ամբիոնը նոր կադրերով համալրելու հարցը՝ հատկապես Կիրառական մաթեմատիկա ու Ինֆորմատիկա մասնագիտությունների գծով որակյալ կադրեր պատրաստելու համար:

Ֆիզիկամաթեմատիկական և տնտեսագիտության ֆակուլտետի դեկան Ս. Մարգարյանը դրական գնահատեց Ա. Մանուկյանի

կատարած կազմակերպչական աշխատանքները և առաջարկեց փակ գաղտնի քվեարկությանը թողնել նրա թեկնածությունը:

Ֆրանսերեն, գերմաներեն լեզուների և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի մասին խոսելիս Վ. Գրիգորյանը շեշտեց ֆրանսերեն լեզու և գրականություն մասնագիտության գծով դիմորդների քանակի կտրուկ նվազումը:

Ֆրանսերեն լեզու և գրականություն մասնագիտության գծով դիմորդների քանակի նվազումն օտար լեզուների ֆակուլտետի դեկան Թ. Մելիքյանը հիմնավորեց աշխատաշուկայում համապատասխան մասնագետների պահանջարկի բացակայությամբ: Առկա պայմաններում Վ. Ստեփանյանն այն անձն է, ով կարող է պահպանել ու զարգացնել ամբիոնը: Նա առաջարկեց թողնել Վ. Ստեփանյանի թեկնածությունը փակ գաղտնի քվեարկությանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Կազմակերպել լինֆորմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ու ֆրանսերեն, գերմաներեն լեզուների և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնների վարիչների ընտրության փակ գաղտնի քվեարկություն:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ – 47 անդամ. կողմ՝ 47, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Նիստի նախագահը գիտական խորհրդի անդամներին փակ գաղտնի քվեարկության կարգը ներկայացնելուց հետո առաջարկեց գիտական խորհրդի անդամներից ընտրել առնվազն 3 հոգուց կազմված հաշվիչ հանձնաժողով՝ փակ գաղտնի քվեարկություն անցկացնելու և դրա արդյունքներն ամփոփելու համար:

Հաշվիչ հանձնաժողովի անդամներ ընտրվեցին՝

1. Մելիքյան Թամարա,
2. Սողոյան Սպարտակ,
3. Մաթևոսյան Ազատ:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ – 47 անդամ. կողմ՝ 47, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Փակ գաղտնի քվեարկության անցկացումից հետո հաշվիչ հանձնաժողովի նախագահ Թ. Մելիքյանը հրապարակեց քվեարկության արդյունքները.

N	Թեկնածուի ազգանուն, անուն	Կողմ	Դեմ	Անվավեր
1.	Ստեփանյան Վարդուհի	45	2	0
2.	Մանուկյան Արտաշես	42	5	0

ՈՐՈՇԵՑԻՆ.- 1. Հաստատել հաշվիչ հանձնաժողովի կողմից ներկայացված փակ գաղտնի քվեարկության արդյունքները:

2. ա/ Բ.գ.թ., դոցենտ Վարդուհի Միշայի Ստեփանյանին համարել ընտրված 5 տարի ժամկետով ֆրանսերեն, գերմաներեն լեզուների և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի վարիչի պաշտոնում:

բ/ Ֆ.գ.թ., դոցենտ Արտաշես Գուրգենի Մանուկյանին համարել ընտրված 5 տարի ժամկետով ինֆորմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնում:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ – 47 անդամ. կողմ՝ 47, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

5. ԼՍԵՑԻՆ.- Կազմակերպական փաստաթղթերի հաստատում (Հաղ.՝ Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Ա. Ֆարմանյան):

➤ «Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով սովորող ուսանողների ավարտական աշխատանքների կազմակերպման ընթացակարգ:

➤ «Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով սովորող ուսանողների անհատական աշխատանքների կազմակերպման ընթացակարգ:

➤ «Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ-ում ուսումնական խորհրդատուների գործունեության կարգ:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաստատել ներքոհիշյալ կազմակերպական փաստաթղթերը.

➤ «Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով սովորող ուսանողների ավարտական աշխատանքների կազմակերպման ընթացակարգ:

➤ «Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով սովորող ուսանողների անհատական աշխատանքների կազմակերպման ընթացակարգ:

➤ «Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ-ում ուսումնական խորհրդատուների գործունեության կարգ:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ – 47 անդամ. կողմ՝ 47, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

6. ԼՍԵՑԻՆ.- Ընթացիկ հարցեր:

6.1 ԼՍԵՑԻՆ.- Ֆիզիկական կուլտուրա և սպորտ ու նախնական զինվորական պատրաստություն մասնագիտությունների համար ուսումնական պլանով նախատեսված մասնագիտական գործնական դասընթացների գնահատման մեջ փոփոխություն կատարելու մասին (Հաղ.՝ ուսումնամեթոդական վարչության պետ Բ. Պողոսյան):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Ֆիզիկական դաստիարակության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Բ. Սերոբյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաշվի առնելով ֆիզիկական կուլտուրա և սպորտ ու նախնական զինվորական պատրաստություն մասնագիտությունների համար ուսումնական պլանով նախատեսված մասնագիտական գործնական դասընթացների առանձնահատկությունները՝ թույլատրել դրանց գնահատման մեջ կատարել գործոններին ու դրանց կշիռներին վերաբերող փոփոխություն.

➤ ամփոփիչ ստուգում (նորմատիվների հանձնում)՝ 70 միավոր,

➤ ակտիվություն՝ 20 միավոր,

➤ հաճախումներ՝ 10 միավոր:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ - 47 անդամ. կողմ՝ 47, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

6.2 ԼՍԵՑԻՆ.- Ինստիտուտում ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, բարձրագույն մաթեմատիկայի և մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Սամվել Սարգսյանի կողմից ներկայացված «Նանո- և միկրոտեխնիկայի նյութերի և կառուցվածքների մեխանիկայի

պրոբլեմային լաբորատորիայի հինադրման և հետագա գործունեության համար բազային ֆինանսավորում ստանալու ծրագիր-հայտին հավանության արժանացնելու հարցը (Հաղ.՝ Գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր Ա. Ֆարմանյան):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Ինստիտուտի ռեկտոր, մանկավարժական գիտությունների ղեկավար, պրոֆեսոր Վ. Գրիգորյանը, գիտության և արտաքին կապերի գծով պրոռեկտոր, ֆիզմաթ գիտությունների թեկնածու, դոցենտ Ա. Ֆարմանյանը, ֆիզմաթ ֆակուլտետի ղեկան, ֆիզմաթ գիտությունների թեկնածու, դոցենտ Մ. Մարգարյանը, ֆիզիկայի և տեխնոլոգիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հ. Դրմեյանը, ինֆորմատիկայի ամբիոնի վարիչ, ֆիզմաթ գիտությունների թեկնածու, դոցենտ Ա. Մանուկյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- 1.Նկատի ունենալով ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆեսոր Ս. Սարգսյանի կողմից ներկայացված ծրագիր-հայտի հիմնարարությունը, լայնածավալ գիտական այս ուղղության արդիականությունը և կիրառական լուրջ նշանակությունը՝ ինստիտուտի գիտական խորհուրդն իր հավանությանն արժանացրեց ներկայացված ծրագիր-հայտը:

2.Միևնույն ժամանակ ինստիտուտի գիտական խորհուրդը միջնորդում է ՀՀ կրթության և գիտության նախարարության Գիտության պետական կոմիտեին արդիական գիտական այս ծրագրին բազային ֆինանսավորում տրամադրելու համար:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ – 47 անդամ. կողմ՝ 47, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

6.3 ԼՍԵՑԻՆ.– Հետազոտողի կրթական ծրագրով նախատեսված հետազոտական պրակտիկայի /2 կրեդիտ/ ինստիտուտի հետ համագործակցող կազմակերպությունների հետ ծառայությունների մատուցման պայմանագրեր կնքելու և մեկ ժամի /40 րոպե/ համար վարձատրման չափը սահմանելու մասին (Հաղ.՝ ուսումնամեթոդական վարչության պետ Բ. Պողոսյան):

ՈՐՈՇԵՑԻՆ.– Հետազոտողի կրթական ծրագրով նախատեսված հետազոտական պրակտիկայի /2 կրեդիտ/ ինստիտուտի հետ համագործակցող կազմակերպությունների հետ կնքել ծառայությունների մատուցման պայմանագրեր և մեկ ժամի /40 րոպե/ համար սահմանել վճար՝ 500 (հինգ հարյուր) ՀՀ դրամ՝ ներառյալ ՀՀ օրենքով նախատեսված հարկերը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ – 47 անդամ. կողմ՝ 47, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Գիտական խորհրդի նախագահ՝

Վ. Գրիգորյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Թ. Խաչատրյան